«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
Տիգրան Հակոբյան
Էլեկտրոնային փոստի հասցե՝ tigran-hakobyan-1987@mail.ru

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության
Կարգապահական և էթիկայի կոմիտեի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16.11.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Դավիթ Բակլաչյան

Կարգապահական խախտում՝ Տիգրան Հակոբյանի կողմից մրցավար Արթուր Սաֆարյանի՝ որպես ֆուտբոլային սուբյեկտի նկատմամբ բռնություն կիրառելը (ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգ (2021թ. խմբագրություն) 38-րդ հոդված 02 կետ գ) ենթակետ)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն քննարկելով վարույթի շրջանակներում որոշման կիրառման վերաբերյալ հարցը և ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 3-րդ հոդվածի 2-րդ կետով՝ հանգել է հետևության որոշման կայացման համար նյութական իրավունքի մասով կիրառել 2021 թվականի խմբագրության ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգը, իսկ ընթացակարգային իրավունքի մասով կիրառել 2023 թվականի խմբագրության ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգը։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 20-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2021 թվականի խմբագրություն) 5-րդ հոդվածի 03 կետը, 20-րդ հոդվածը, 21-րդ հոդվածը և 23-րդ կետի 04 կետը՝ արգելել Տիգրան Հակոբյանին ծավալելու ֆուտբոլային ցանկացած գործունեություն 3 (երեք) տարի ժամկետով։ Արգելքը տարածվում է 2022 թվականի մայիսի 16-ից սկսած (ՀՖՖ Գործադիր կոմիտեի N 3 նիստ)։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝
Կարեն Հովհաննիսյան